ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 141- Ա **07 մայիսի 2015 թ**

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ հատկացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի սահմանամերձ զորամասերի զինվորների համար սննդամթերք գնելու և տրամադրելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վանիկ Հովհաննիսյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ